ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար « ՀՀ ՇՄԱ ԷԱՃՇՁԲ-2025/01» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով տրանսպորտային փոխադրումների ծառայության ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

06.06.2025 թվական **ք. Գյումրի**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Աստղիկ Ալեքսանյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ մասնագետ /նախագահ/,

Անդամներ՝

Աննա Պետրոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ / խմբի անդամ/,

Գրիգոր Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ / խմբի անդամ/,

Քարտուղար՝ Զարիկ Մուրադյան

Հանձնաժողովը լսեց օրակարգի հետևյալ հարցերը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
(զեկուցող՝ Ա. Ալեքսանյան)

1. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների վերացման մասին:
2. Անգործություն կիրառելու ժամկետի մասին
3. Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին պայմանագրերի նախագծերը ծանուցելու մասին

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտում արձանագրված անհամապատասխանությունների վերացման մասին:

N	Կազմակերպություն	Չափաբաժիններ	Գնահատում	Մեկնաբանություն
1	«ԱՐԹՈՒՐ ՂԱՋԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ» Ա/Ձ	1	բավարար	**Անհամապատասխանությունները շտկվել են**

(զեկուցող՝ Ա. Ալեքսանյան)

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի հիմքով՝ մեկ աշխատանքային օրով նիստը կասեցվել էր մասնակիցների հայտում արձանագրված հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունները վերացնելու համար, անհամապատասանությունները սահմանված ժամկետում շտկվել են:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Անգործություն կիրառելու ժամկետի մասին

Սյուն ընթացակարգի համար ՀՀ «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացույցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
Անգործության ժամկետը կիրառելի է բավարար գնահատված չափաբաժնի մասով:

3. Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին պայմանագրի նախագիծը ծանուցելու մասին

Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակիցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու պայմանագրի ապահովում նախատեսված ապրանքի գնման գնի 10(տաս) տոկոսի չափով՝ և որակավորման ապահովում՝ նախատեսված ապրանքների գնման գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով,

Հանձնաժողովի նախագահ՝ Մատղիկ Ալեքսանյան

Անդամներ՝ Աննա Պետրոսյան

Գրիգոր Գրիգորյան

Համակարգող քարտուղար՝ Զարիկ Մուրադյան